ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

"06" 03 2019 թ. N 162-Ա

ք. Երևան

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԽԹԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 1030-Լ որոշման 241 կետը և 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1515-Ն որոշման 17-րդ կետի 1-ին ենթակետի բ) պարբերության պահանջների կատարումն ապահովելու նպատակով

Հրամայում եմ՝

1. Հաստատել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2019 թվականի ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2019 թվականի ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանին:

ՆԱԽԱՐԱՐ **Հ. ԱՐՇԱԿՅԱՆ**

"06" 03 2019թ

ք.Երևան

Հավելված 1
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարի
2019 թվականի Դեկտեմբեր 6-ի
թիվ 162-Ն հրամանի

2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԽԹԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

I. ՆԱԽԱԲԱՆ

1. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտը հանդիսանում է Հայաստանի տնտեսության ամենաարագ զարգացող ճյուղերից մեկը: Ոլորտում այսօր իրականացվող ծրագրերը մեծապես նպաստում են Հայաստանի տնտեսության արտադրողականության և մրցունակության բարձրացմանը, մեծ հավելյալ արժեք ապահովող աշխատատեղերի ստեղծմանը, գիտելիքահենք տնտեսության ձևավորմանն ու զարգացմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, տեղական ընկերությունների արտադրանքի և ծառայությունների արտահանմանն ու համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես զարգացած տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ոլորտ ունեցող երկրի վարկանիշի բարձրացմանը:

2. 2000 թվականին տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ճանաչվել է որպես Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը: 2001 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացավ Հայաստանի Հանրապետության ինֆորմացիոն (տեղեկատվական) տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգը, 2008 թվականին՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգը, 2010 թվականին՝ Հայաստանում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը: Հայաստանի Հանրապետության Նախագահի 2001 թվականի հուլիսի 20-ի N ՆՀ-896 հրամանագրով ստեղծվեց Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդը, որի նախագահը Հայաստանի Հանրապետության վարչապետն է:

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի սկսնակ ընկերությունների ձևավորումը և նոր աշխատատեղերի ստեղծումը խթանելու նպատակով ընդունված «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակում 2017 թվականին հարկային արտոնություններից օգտվելու հավաստագիր են ստացել 281 ընկերություններ:

4. Շարունակվել են աշխատանքները «Մայքրոսոֆթ», «ԱյԲիԷմ», «Նեյշնլ Ինսթրումենթս» և այլ վերազգային կազմակերպությունների հետ կնքված փոխըմբռնման հուշագրերի շրջանակում, ինչպես նաև ձեռնարկվել են միջոցառումներ այս և նմանատիպ այլ նոր ընկերությունների հետ համագործակցություն հաստատելու և ընդլայնելու ուղղությամբ:

5. Պարբերաբար կազմակերպվել են ամենամյա «Դիջիթեք» տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների մասնագիտացված միջազգային ցուցահանդեսը և «Դիջիթեք» բիզնես-ֆորումը:

6. 2018 թվականին տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտի ընդհանուր շրջանառությունը կազմել է շուրջ 922,3 մլն ԱՄՆ դոլար՝ որից ծրագրավորում և ՏՏ խորհրդատվություն կազմել է շուրջ 730,2 մլն ԱՄՆ դոլար, ակտիվ գործող ընկերությունների թիվը՝ ավելի քան 800, ընկերություններում ներգրավված աշխատակիցների թիվը՝ շուրջ 19552 մասնագետ: 2018 թվականին ՏՏ ոլորտի աճը 2017 թվականի համեմատ կազմել է 28%: 2018 թվականին շուրջ 850 ընկերություններ և անհատ ձեռնարկատերեր իրենց հաշվետվությունները ներկայացնում են էլեկտրոնային եղանակով՝ ՏՏ ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի տեղեկատվական համակարգում /բացառապես ՏՏ ծառայությունների մասով/:

7. Հայաստանի Հանրապետության կառավարությունը հետևողականորեն շարունակում է աջակցել ոլորտի հետագա զարգացմանը:

8. 2018 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվել էր 98660.0 հազ. դրամ՝ որպես պետական աջակցություն՝ ուղղված ՏՏ ոլորտի զարգացմանը: Նշված ծրագրի շրջանակում 2018 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝ 2018 թվականի հունիսի 29-30-ը կազմակերպել է 11-րդ ամենամյա միջազգային Դիջիթեք Բիզնես ֆորումը՝ «Խելացի լուծումներ խելացի բիզնեսի համար» կարգախոսի ներքո, որին «ներգրավված են եղել 800-900 մասնակից: 2018 թվականի հոկտեմբերի 5-ից 7-ը տեղի է ունեցել «Դիջիթեք Էքսպո 2018» տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ցուցահանդեսը, որին մասնակցել են տեղական ու օտարերկրյա 180 կազմակերպություններ և 80000 այցելու: 2018 թվականի հոկտեմբերի 13-ից 14-ը անցկացվել է «ՏՀՏ լիդերներն առանց փողկապների» խորագրով արտագնա հանդիպում-քննարկումներ: 2018 նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 1-ը Դիլիջանում «Հայաստանի արդիականացման ճանապարհին» խորագրի ներքո կայացել է միջազգային Բիզնես ինովացիոն ֆորումը, որին մասնակցել է 120 ներկայացուցիչներ:

2018 թվականի դեկտեմբերի 14-ին «Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակում «VC» վենչուրային համաժողովի ֆինանսավորում» միջոցառման շրջանակներում հայտարարվել է մրցույթ, որի ընթացքում ստացվել է 41 հայտ: Ներկայացված հայտերը ուսումնասիրվել են և 2-րդ փուլ անցաց 14 կազմակերպություններ ներկայացրել են

իրենց ծրագրերը և հանձնաժողովի կողմից հաղթող է ճանաչվել 5 ծրագիր՝ յուրաքանչյուրը 2 800 000 դրամ դրամաշնորհի տեսքով:

«Հայ-հնդկական ՏՀՏ ուսումնական կենտրոնի բնականոն գործունեության ապահովում» միջոցառման շրջանակում կազմակերպվել են 74 կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացներ, մասնակիցների թիվը՝ շուրջ 648: Կազմակերպվել են նաև 125 սեմինարներ, մասնակիցների թիվը՝ շուրջ 438: «Վերազգային ընկերությունների հետ համատեղ ծրագրերի իրականացում» միջոցառման շրջանակում շարունակվել են աշխատանքները վերազգային ընկերությունների հետ: 2018 թվականի Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի կարողությունների զարգացման բաղադրիչի շրջանակում իրականացվել են 73 դասընթացներ, մասնակիցների թիվը՝ շուրջ 923: ՄԻԿ-ի կողմից շարունակվել է նաև աքսելերացիոն ծրագրերի իրականացումը: «Նեյշնլ Ինսթրումենթս» ընկերության հետ համատեղ իրականացվող Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիայի (ANEL) ծրագրի շրջանակում 3784 ուսանողներ մասնակցել են «ANEL»-ի կողմից կազմակերպված դասընթացներին: 2018 թվականին Նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի շրջանակում կազմակերպվել է 29 դասընթացներ, մասնակիցների թիվը՝ շուրջ 500:

9. Աշխատանքների իրականացումը հնարավոր է եղել ապահովել պետական, մասնավոր և դոնոր կազմակերպություններից լրացուցիչ միջոցների ներգրավմամբ:

2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

10. ՏՏ ոլորտի զարգացման միտումների հետ մեկտեղ, ոլորտում առկա են նաև մի շարք հիմնախնդիրներ: Դրանք են՝ մասնավորապես, ՏՏ ոլորտում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, մրցունակ կադրերի ուսուցման ու վերապատրաստման առկա դժվարությունները, տեխնոլոգիական ձեռներեցությունը խթանող ֆինանսական մեխանիզմների, ՏՏ ոլորտում բարենպաստ գործարար միջավայրի ապահովման, հայաստանյան շուկայում նոր վերազգային կազմակերպությունների և ներդրումների ներգրավման, Հայաստանում ՏՏ ոլորտի հետագա զարգացումն ու էլեկտրոնային հասարակության կայացումն ապահովող կիրարկման մեխանիզմների բարելավման հետ կապված խնդիրները, տեղական արտադրանքի և ծառայությունների արտահանման և միջազգային շուկայում կայուն դիրքավորման բարդությունները, արագ զարգացող տեխնոլոգիական աշխարհում Հայաստանի մրցունակության պահպանման հետ կապված խնդիրները, արդիական տեխնոլոգիական ենթակառուցվածքների անբավարարությունը:

11. Նշված հիմնախնդիրների հաղթահարմանն են ուղղված 2019 թվականի ընթացքում նախատեսվող ծրագրային միջոցառումները:

II. ՏՏ-Ի ՈԼՈՐՏԻ ԽԹԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

12. SS ոլորտի խթանման ծառայությունների 2019 թվականի ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակման համար հիմք են հանդիսացել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 28-ի նիստի «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների արդյունաբերությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը ճանաչելու մասին» N58 արձանագրային որոշումը,

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի նիստի «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N35 արձանագրային որոշումը,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 1030-Լ որոշման 241 կետը,

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1515-Ն որոշման 17-րդ կետի 1-ին ենթակետի բ) պարբերությունը:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

13. Ծրագրի հիմնական նպատակներն են.

1) Հայաստանում տեխնոլոգիական ժամանակակից ենթակառուցվածքներով, համակարգչային հագեցվածության և ինտերնետ հասանելիության բարձր մակարդակով, համակարգչային բարձր գրագիտությամբ, համատարած կիրառվող էլեկտրոնային ծառայություններով, մեծածավալ տեղական SS շուկայի առկայությամբ և առաջադեմ գիտելիքահենք արդյունաբերությամբ երկրի վարկանիշի ապահովումը.

2) Մեծ հավելյալ արժեք ստեղծող հետազոտական և բարդ ինժեներական լուծումներ ու ծառայություններ մատուցող ընկերություններով, միջազգային շուկայում մրցունակ տեղական SS արտադրանքով զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կայացումը.

3) Համաշխարհային շուկայում մրցակցային առավելություններ ունեցող «Հայկական SS ապրանքային նշան»-ի ներթափանցումն ու առաջմղումն ապահովող միջոցառումների իրականացումը.

4) Հայկական ՏՀՏ ոլորտի մի շարք կարևոր ուղղությունների աճը խթանելու նպատակով համապատասխան կրթությամբ բարձրորակ մասնագետների պատրաստման, որակյալ աշխատուժի աճի պահպանման և զարգացման խնդիրների լուծումը.

5) Ոլորտի արդյունավետության աճի պահպանումը և առավել զարգացումը (տարեկան մինչև 20% չափով).

6) Որակյալ աշխատուժի աճի պահպանումը և առավել զարգացումը (տարեկան մինչև 12% չափով):

14. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) SS ոլորտի զարգացման միտումների վերլուծությունն ու խնդիրների բացահայտումը, ոլորտի նվաճումների ներկայացումը, ոլորտի զարգացման խթանման, ներկայացման և առաջմղման համար մեխանիզմների մշակումը, SS ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի արդյունավետ վարումը,

2) հայաստանյան SS ոլորտի ձեռքբերումները տեղական ցուցահանդեսներում, համաժողովներում և այլ միջոցառումներում ներկայացնելու արդյունքում հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացումը, տնտեսության այլ բնագավառներում SS լուծումների կիրառման խթանումը, արտադրողականության աճի ու ապրանքների և ծառայությունների արտահանման ավելացումը,

3) SS ոլորտի զարգացմամբ հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատման և ընդլայնման միջոցով Հայաստանում նշված երկրների փորձի շարունակական ներդրումը, Սփյուռքի հետ համագործակցության ընդլայնումը, ներդրումների ներգրավումը, նպատակային երկարաժամկետ ծրագրերի իրականացումը և SS ոլորտի նոր վերազգային կազմակերպությունների Հայաստան ներգրավումը՝ վերջիններիս փորձի, հեղինակության ու կապերի շնորհիվ Հայաստանի վարկանիշի բարձրացումը և Հայաստանի, որպես տարածաշրջանային SS հանգույցի իմիջի ձևավորումը,

4) ոլորտի որակյալ մասնագիտական կարողությունների զարգացումը, մասնավորապես՝ Հայ-ինդկական ՏՀՏ ուսումնական կենտրոնի բնականոն գործունեության ապահովումը, դասընթացների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպումը, վերազգային ընկերությունների հետ կարողությունների զարգացման և այլ համատեղ ծրագրերի իրականացումը:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

15. Ծրագիրն ուղղված է Հայաստանում SS ոլորտի շարունակական զարգացմանը և միջազգային շուկաներում դիրքավորմանը, երկրում գիտելիքահենք տնտեսության զարգացման ուղղությամբ իրական հնարավորությունների ստեղծմանը, և այն իրականացվում է պետական և մասնավոր հատվածների համագործակցության սկզբունքով՝ որպես պետական աջակցություն:

V. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

16. Հայաստանի SS ոլորտի ներկայացում և խթանում Հայաստանում ու արտերկրում, հետազոտություն, հասարակական իրազեկում՝

1) Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգով առաջնային խնդիրներից են հանդիսանում Հայաստանում և արտերկրում ոլորտի ներկայացումը, SS ոլորտում հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազգային կառույցների հետ համագործակցության խթանումն ու ապահովումը, Հայաստանի վարկանիշի ձևավորումը՝ որպես SS տարածաշրջանային կենտրոն, այդ թվում՝ նպաստելով Հայաստանում մի շարք միջազգային

նշանակության միջոցառումների պարբերական անցկացմանը, հեռանկարային ծրագրերի իրականացմանը, ոլորտի նոր վերազգային կազմակերպությունների ներգրավմանը՝ վերջիններիս փորձի, հեղինակության ու կապերի շնորհիվ Հայաստանի վարկանիշի բարձրացման և հայկական SS ապրանքային նշանի առաջխաղացման նպատակով.

2) Հայաստանում ու արտերկրում SS ոլորտի ներկայացումը, խթանումը և հասարակության իրազեկումը պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է համապատասխան նյութերի նախապատրաստում և հրապարակում: Այդ ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել ոլորտին վերաբերող հետազոտություններ և վերլուծություններ, որոնք կներկայացնեն SS ոլորտի առկա իրավիճակը, այդ թվում՝ հիմնական խնդիրները, ռազմավարական զարգացման հեռանկարները և վերջին տարիներին գրանցված նվաճումները: Միաժամանակ, անհրաժեշտություն է առաջանում թարմացնել ոլորտի կազմակերպությունների ուղեցույցը: Վերոնշյալ հետազոտությունները, վերլուծությունները և ուղեցույցները արդյունավետ կերպով կծառայեն ոչ միայն բազմաթիվ միջոցառումների, հանդիպումների ընթացքում հայկական SS ոլորտի ներկայացմանը, այլև տեղեկատվական աղբյուր կհանդիսանան SS ոլորտում առկա հիմնական խնդիրների և դրանց հաղթահարման հնարավոր ուղիների, ոլորտի զարգացման հեռանկարների, ներդրումների ներգրավման և հետագա ռազմավարության մշակման համար.

3) խոշորագույն համաժողովներում և ցուցահանդեսներում, միջազգային և տեղական շուկաներում Հայաստանի SS ոլորտի ներկայացումը հանդիսանում է կարևորագույն գործոն Հայաստանի՝ որպես հայկական SS ոլորտի կարողությունների և ձեռքբերումների ցուցադրման, ՏՀՏ և բարձր տեխնոլոգիաներ ունեցող երկրի վարկանիշի բարձրացման, նոր գործարար կապերի ստեղծման ու ընդլայնման, միջազգային շուկաներում հայկական տեխնոլոգիական ընկերությունների արտադրանքի և ծառայությունների ներկայացման միջազգայնորեն մրցունակ հայկական SS ապրանքային նշանի ձևավորման, ոլորտի վերջին համաշխարհային նվաճումներին ծանոթացման, շուկայական ուսումնասիրությունների ու վերլուծությունների կատարման համար.

4) Հայաստանում կազմակերպվող միջոցառումները (ցուցահանդեսներ, համաժողովներ, մրցույթներ և այլն) նպատակ ունեն ցուցադրելու հայկական SS ոլորտի նվաճումները, որոնք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության կառավարության, մասնավոր հատվածի, գիտական, կրթական հաստատությունների ու դոնոր կազմակերպությունների համագործակցության և համատեղ ջանքերի արդյունքներ: Նշված միջոցառումներն ուղղված են խթանելու նաև ոլորտի վերաբերյալ հասարակության իրազեկվածության աստիճանի բարձրացումը՝ հիմք հանդիսանալով նորարարությունների, արտադրողականության ու մրցունակության բարձրացման և տեխնոլոգիական հանրության ներսում առկա կապերի ամրապնդման համար:

5) «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ 2016 թվականի հունվարի 1-ից իրականացվում է SS ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի վարումը: Ռեգիստրի ստեղծման նպատակն է ապահովել SS ոլորտի վարչական վիճակագրական տեղեկությունների հավաքագրումը և դրանց հիման վրա ոլորտում վերլուծությունների ու կանխատեսումների

Հավելված 2
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարի
2019 թվականի Մարտի 6-ի
թիվ 162-Ա հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԽԹԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Միջոցառումը	Կատարման ժամկետը	ՀՀ պետական բյուջեից հատկացվող ֆինանսավորման չափը (ներառյալ՝ ԱԱՀ)	Կատարման արդյունքները
1	2	4		6
1.	Հայաստանի SS ոլորտի ներկայացում և խթանում Հայաստանում և արտերկրում, հետազոտություն, հասարակական իրազեկում			
1.1.	SS ոլորտի հետազոտություն, ընկերությունների վերաբերյալ ուղեցույց և ներկա իրավիճակի վերլուծություն	2019թ. ընթացքում	6960 հազ. ՀՀ դրամ	SS-ի ոլորտի հետազոտության, ներկա իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքում ոլորտի հիմնական խնդիրների և մարտահրավերների բացահայտում, ոլորտի կազմակերպությունների ուղեցույցի թարմացում

1.2.	«ICT Stat» համակարգի սպասարկում և թարմացում	2019թ. ընթացքում	7200 հազ. ՀՀ դրամ	Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի արդյունավետ վարում
1.3.	«Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակում «VC» վենչուրային համա-ժողովի ֆինանսավորում» միջոցառման կազմակերպում և իրականացում	2019թ. ընթացքում	20640 հազ. ՀՀ դրամ	Նորարարական թիմերի խթանում, ձեռներեցության և նորարարության աջակցման մրցույթի և ամփոփիչ վենչուրային համաժողովի կազմակերպում մրցույթի անցկացման արդյունքում մինչև 5 դրամաշնորհների տրամադրում
1.4.	«Դիջիթեք 2019» ցուցահանդեսի և դրա շրջանակում այլ միջոցառումների ֆինանսավորում	2019թ. 2-րդ կիսամյակ	10000 հազ. ՀՀ դրամ	Ոլորտի ընկերությունների միջև նոր կապերի ստեղծման խթանում, ոլորտի նոր ընկերություններին շուկա մուտք գործելու և իրենց ապրանքներն ու ծառայությունները ցուցադրելու համար հնարավորությունների ստեղծում: «Դիջիթեք-2019» ցուցահանդեսի և դրա շրջանակում իրականացվող այլ միջոցառումներին ակնկալվում է առնվազն 30000 մարդու այցելություն
1.5.	Բիզնես ինովացիոն ֆորումի կազմակերպում	2019թ. ընթացքում	1000 հազ. ՀՀ դրամ	Տարեկան մեկ «Բիզնես ինովացիոն ֆորում»-ի կազմակերպում
1.6.	SS ոլորտի մասնավոր հատվածի հետ «ՏՀՏ լիդերները՝ առանց փողկապների» խորագրով անցկացվող պարբերաբար արտագնա հանդիպում-քննարկումների կազմակերպում	2019թ. ընթացքում	1000 հազ. ՀՀ դրամ	Տարեկան 2 միջոցառումների կազմակերպում: Ակնկալվում է, որ կմասնակցեն ոլորտի 100 կազմակերպությունների ներկայացուցիչներ, պետական 5 գերատեսչությունների ղեկավարներ, 25 նորաստեղծ ընկերությունների ներկայացուցիչներ, ոլորտի գործունեությունը լուսաբանող 20 լրագրողներ

1.7.	«Դիջիթեք բիզնես ֆորում 2019» համաժողով	2019թ. 1-ին կիսամյակ	3000 հազ. ՀՀ դրամ	Տնտեսության այլ բնագավառներում ՏՏ-ի ոլորտի գործիքների և լուծումների կիրառման հնարավորությունների ներկայացում, գործնական կապերի ստեղծման խթանում
2.	Միջազգային համագործակցություն			
2.1.	Հայ-հնդկական ՏՀՏ ուսումնական կենտրոնի բնականոն գործունեության ապահովում	2019թ. ընթացքում	19774 հազ. ՀՀ դրամ	Ուսումնական ծրագրերի, սեմինարների, դասընթացների, ինչպես նաև բարձր արտադրողականության հաշվողական տեխնոլոգիաներով հետազոտական ծրագրերի իրականացում, 500 ուսանողի և մասնագետի կարողությունների զարգացում
2.2.	Վերազգային ընկերությունների հետ համատեղ ծրագրերի իրականացման ապահովում	2019թ. ընթացքում	18000 հազ. ՀՀ դրամ	Վերազգային ընկերությունների հետ համատեղ ծրագրերի և միջոցառումների իրականացում, առնվազն 1 մրցույթի և 5 միջոցառումների կազմակերպում
3.	Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի (ՏՏԶԱԽ) քարտուղարության գործունեության ապահովում	2019թ. ընթացքում	11086 հազ. ՀՀ դրամ	Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի (ՏՏԶԱԽ) քարտուղարության հետագա բնականոն գործունեության ապահովում